ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

12 նոյեմբերի 2025թ. թիվ 1299

Ի.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ Վ.ՋԱՂԻՆՅԱՆԻՆ
ՍՊԻՏԱԿ ԵՎ ՋՐԱՇԵՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետներ Իրինա Մարտիրոսյանին և Վալերի Ջաղինյանին ս/թ նոյեմբերի 12-ին մեկ օրով գործուղել Սպիտակ և Ջրաշեն՝ «Ջրաշենի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ այցելության և Սպիտակի հոգեկան առողջության կենտրոնում անցկացվող հերթական նիստին մասնակցելու համար:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր